

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 8 Մճ.  
• Գաւառաց 40 Մճ.  
վեցամս. • Կ. Պոլսոյ • 4 Մճ.  
• Գաւառաց • 3 Մճ.  
Օտար երկիրներու • 50 Ֆր.  
Պանդուխտան տողը մէկ անգամի հա-  
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-  
մար 2 դուշ է. աւելի անգամներու  
համար զատ սակարկութիւն կըլ-  
լայ :  
Իւրաքանչիւր թիւ 2 դրնոց թուղթ.



ԼԵՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱՁՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ճանրու-  
ած արքայ խորագրութեան վրայ է :  
Լրագրոյս վերաբերեալ նամակ  
կամ որ և լցէ գրութիւն խորագրի  
— Տնօրէնին պիտի ուղղուի : Ղալա-  
թիս Սանտրոքըլար շատակի թիւ  
198, Նօրօ խան, Մասիսի գրասեն-  
եակը :  
Ճանրուած արքայ խորագրութեան  
մակ չընդունուիր :  
Չարդուած նամակ, յօդուած, եւ  
եւ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՅՑԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 6 ՄԱՐՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ելմտական լուրերն անյաջող են  
միշտ : Պ. Տը թօքվիլի պայմանաժամը  
լրացաւ, և մինչև մեր դրած վայր-  
կեանքը դրեթէ բնաւ լուր չկար թէ  
անոր հետ կնքուած պայմանագիրը  
գործադրութեան յոյս մը կ'ընծայէ :  
Անդղիոյ ելումտակի նախարարն յայ-  
տարարեց թէ Բրիտանական կառա-  
վարութիւնը միտք չունի Օսմանեան  
նոր փոխառութեան երաշխաւորելու,  
բայց չպիտի մերժէ Բ. Գրան տրամա-  
դրութեան ներքեւ դնել պարկէշտ և  
յաջողակ պաշտօնատարները : Արդարեւ  
այդ պաշտօնատարը կրնան օգտակար  
ծառայութիւններ մատուցանել, սա-  
կայն ինչպէս արդէն ուրիշ առթիւ ը-  
սած էինք, Եւրոպա չկրնար իւր նիւ-  
թական շահուց պրայ հիմնել իւր աշ-  
խարհավարութիւնն : Եւրոպայի տը-  
ւած պաշտօնատարը կրնան գործ  
տեսնել օգտակար կերպիւ, եթէ երկ-  
րին մէջ իրարեւ յառաջդիմութեան  
միտում լինի. սակայն ցաւալի է որ  
այս շարժումը տակաւին խիստ տկար  
է, և Եւրոպայի պաշտօնատարը ներ-  
կայ վիճակին մէջ կանոնաւոր և բարձր  
ամակաւն ստանալէ զատ չենք գիտեր  
ինչ բանի կրնան ծառայել : Եւրոպայի  
շահերուն յաջողութեան վրայ կրնա-  
լինք, յոյս մը դնել թէ ներքին յա-  
ռաջդիմական տարերայ զարգացման  
ալ ի միասին խնամք տաներ. սա-  
կայն եթէ միմիայն Եւրոպական և օ-  
տար տարրը կը կարծէ ինքնիքն  
գործել առանց ներքին տարերայ ա-  
ջակցութեան, իւր շահերը չեն կըր-  
նար կատարելապէս արդասաւոր լի-  
նիլ, և մանաւանդ ստեղծ ամբողջեան  
պիտի դատապարտուին : Այս է պատ-  
ճառն որ մինչև հիմայ բարեւոք վար-  
չութեան վրայ բռնեցող խօսք և  
հատորներով գրութիւններ տեսնուե-  
ցան, իսկ վիճակն երթալով վատթա-  
րացաւ : Այսուհետեւ ալ եթէ առա-  
ջին սխալ ճանապարհն ի բաց չլծ-  
ղուի, տարակոյս չկայ որ հիմնական  
բարեւոք չկրնար լինիլ : Քանի մ'օ-  
տար պաշտօնատար աւելի կամ պա-  
կամ բնաւ տարբերութիւն չընեն  
երկրին յետադիմական վիճակի  
մէջ և իւր ամենէն յառաջդիմական  
տարրերը ճնշուած : Թող այն ատեն  
Եւրոպա յոյս չունենայ թուրքիայէն  
տոկոս ստանալու, քանզի անբարեա-  
ւաճ և յետադէմ երկիր մը չկրնար օ-  
տարին կանոնաւոր տոկոս վճարել :  
Ճամանակ մը թուրքիա փոխառու-  
թեամբ կը վճարէր փոխառութեանց  
տոկոսները, բայց հիմայ՝ որ ամեն  
մարդ կը խոստովանի թէ այն դարն  
անցած է, վճարելու կարողութիւնը

բարդաւաճութեան, այս ալ աշխա-  
տութեան, ճարտարութեան, ար-  
ուեստից, վաճառականութեան և  
երկրագործութեան կարօտ է : Երբ  
այն տարերք որք աւելի յարմար են  
ասանց և որոց աշխատութեամբ միայն  
կը հարստանայ երկիրը, զարգացման  
նպատակով վիճակի մէջ չլինին, Եւ-  
րոպա ի դուր իւր ամենէն ճարտար  
պաշտօնատարները կը զրկէ : Խնդիրն  
հստ է ուրեմն որ Եւրոպա պէտք է  
նախ և առաջ հոգ տանի յառաջդի-  
մական տարերքն ապահովել վիճա-  
կի մէջ դնելու և անոնց ներկայն ու  
ապագայն բարեւոքելու, որպէս զի  
երկրին բնական հարստութիւնները  
կարենան զարգանալ և երկրագոր-  
ծութիւնն ու վաճառականութիւնը  
ծաղկիլ : Կարելի է ըսեն թէ երկա-  
թուղեայ շինութեամբ կրնայ երկիրն  
հարստանալ, բայց փորձը ցոյց տը-  
ւած է որ նախնական վիճակի մէջ  
գտնուող երկիրներու մէջ երկաթու-  
ղիներն իրենց ծախքը չեն կրնար հա-  
նել : Ուստի արդարութիւնն ու ա-  
պահովութիւնը պէտք է ամենէն ա-  
ռաջ անցնին, և Եւրոպա ասոնք ի  
գործ դնելու համար իւր պաշտօնա-  
տարայ օժանդակ պէտք է առնու-  
բոլոր այն ներքին տարրերն, որոց սի-  
րելի է հոյրենեայ զարգացումն, և  
որոց մէջ, շահասէրներն ու չարամիտ-  
ներն ինչ որ ալ ըսեն, կարող, ձե-  
ռընհատ և պարկէշտ մարդիկ չեն  
պակսիր : Եւրոպա կարելի է հարե-  
ւանցիլ նպուածքով Արեւելեան տա-  
րերայ վրայ տակաւին կատարելա-  
վտանգութիւն չզգար, բայց տարա-  
կոյս չկայ որ փորձը կրնայ շատ սխա-  
լներ երեւան հանել, և եթէ առանց կան-  
խակալ կարծեաց հոգ տարուի Արեւե-  
եան տարերայ յառաջդիմութեան,  
վտանգ մը որ կարծուած էն աւելի ար-  
դիւնք կրնայ տեսնուիլ : Միւս կող-  
մանէ Արեւելեան տարերք ևս պէտք  
ունին իրենց դարաւոր թմբուկներէն  
սթմափնով ժամանակէն պահանջում  
ներն ըմբռնել, առանց որոյ անհնար  
է իրենց ապագայն բարեւոքել : Այս  
պահանջումներէն առաջինն է ուս-  
մունքն, որ պէտք է այսուհետեւ նոր  
թուիլ մ'առնու, քանզի առանց ա-  
նոր անկարելի է որ և է նիւթական  
կամ բարդական զարգացում :

Երկրագործական խնդիրն, ինչպէս ար-  
դէն ըսինք, հանդարտեցաւ, մանա-  
ւանդ քանի որ Գաղղիա և Անդղի-  
ա երկու պատերազմական նաւ զրկեցին  
Ալեքսանդրիոյ ջուրերը : Խաղիկ իւր  
որդին Հասան փաշան, որ Եգիպտա-  
կան զօրաց ընդհանուր հրամանատար  
է, փետր. 6 թիւն օրն Անդղիոյ հիւ-  
պատսոնի զրկեց, և ի ներկայութեան  
Պ. Վիլլերնի հատուցում տուաւ այս  
վերջնոյն եղած թշնամեանց համար :  
Հասան փաշան ներողութիւն խնդրեց

Պ. Վիլլերնի մօրուքն ըմբոստ սպայից  
ձեռքը քաշուած լինելուն համար,  
թշնամանք մը, որ ըստ Անդղիական  
լրագրաց խիստ ծանր կը համարուի  
Արեւելից մէջ : Իսկ Պ. Վիլլերն քաղա-  
քավարական խօսքերով ներում չը-  
նորհեց, ծանուցանելով միանգամայն  
թէ ինք՝ Եգիպտոսի երջանկութեան  
համար հոն գնացած լինելով, պիտի  
չարունակէ իւր ծառայութիւնը վա-  
սն երկրին բարեւոյն : Այսպէս ամեն  
բան վերջացաւ : Իսկ Նուպար փաշա-  
յին դալով, հիւպատոսներն իրմէ  
խնդրած են եղեր թէ կրնա՞ր օտար  
հպատակաց ապահովութիւնն երաշ-  
խաւորել : Նուպար փաշան ալ պա-  
տասխանել թէ ինչպէ՞ս կրնար այս-  
պիսի երաշխաւորութիւն մը տալ :  
մինչդեռ ինք մաղապուր ազատած էր  
վտանգէ, հետեւեալ Նուպար փաշան  
չկրնար լի ինք իրեն և ո'չ այլոց ա-  
պահովութեան երաշխաւորել, հրա-  
ժարեցաւ :  
Տէպա լրագիրն այս դէպքը պատ-  
մելով կըսէ թէ Գաղղիացի և Անդղի-  
ացի նախարարք աւելի ակնածութիւն  
կը ներշնչեն, քանզի զօրաւոր ազգաց  
կը վերաբերին, և Արեւելիք ալ նիւ-  
թական սթմ միայն կը յարգեն : Նու-  
պար փաշան ջրիտոսեայ և Հոյ է :  
«Հայը, կը յարէ Տէպա, Արեւելից մէջ  
միշտ տարտամ և ստորադասեալ վի-  
ճակ մ'ունին, և ամեն ճշմարիտ խաղա-  
քով իւր և ստորին ցեղ մը կը համար-  
ուին, որուն հրամանաց հնազանդին  
խաղաք ամօթ կը սեպեն իրենց : Տէ-  
պայն այս դիտողութիւնը մեր անց-  
եալ օր այս խնդրոյն վրայ ըսածը կը  
հաստատէ : Քանի որ Նուպար փաշան  
օգտակար էր Եւրոպական աղբեղու-  
թիւնն Եգիպտոս մտցնելու, խիստ  
հանճարեղ և կարեւոր պետական մարդ-  
մ'էր, և Եւրոպա զայն կը բռնէր :  
Բայց այսօր Գաղղիացի և Անդղիացի  
նախարարներն կան և Եւրոպա ուղ-  
ղակի աղբեղութեան սկսած է, և թէ-  
պէտ իւր գործիքը բոլորովին ի բաց  
թողած չէ և կը յարնձարարէ եղեր  
Խաղիկն զայն գործածել, բայց քանի  
որ Եւրոպայիներ կան, Նուպար փա-  
շան Հոյ է եղեր, Հայոց վիճակը տար-  
տամ է եղեր, Խաղաքը դանդաղ ստորին  
ցեղ մը կը համարին եղեր : Խնչ ընե-  
լու է ստորին չհամարուելու համար,  
արդեօք Պուլլարներուն պէս փայտէ  
թնդանօթով ապստամբութեան դի-  
մելու է : Բայց Հայը Սլով չեն, . . . :  
Այս դէպքը կարգաւորանէ նաեւ մեր  
այն դիտողութիւնը թէ պէտք է Հայը  
այսուհետեւ իրենց ապագայն իրենց  
ձեռքը պատրաստեն և զայն մի միայն  
աղբուլութեան զգացումն մէջ փնտռեն :  
Նուպար փաշաներու դարն անցնելու  
վրայ է, և կարծենք այսպիսի օրի-  
նակներ տակաւ առ տակաւ պիտի  
ընդհանրացնեն այն հաւատը թէ ա-  
ռանց աղբային զգացումը զարգայը :

Երբեք միմիայն իսկ դժուարին պիտի  
լինի, եթէ ո'չ անկարելի :  
Արաբականացւոյ անցեալները Սեր-  
պիական հոգին վրայ ըրած արշաւանայ  
նկատմամբ Եւրոպական լրագիրք հե-  
տեւեալ տեղեկութիւնները կուտան :  
Տէյլի թէքէլիսափ լրագրոյն մէկ  
թղթակցը կը պատմէ թէ Վրանիտ-  
յի Սերպիական հրամանատարին քա-  
նի մ'օր առաջ լուր տրուած էր թէ  
Արաբիայի քարձակողական շար-  
ժում մը կը պատրաստեն Ամիթապէս  
նախադրուչական միջոցներ ձեռք  
առնուեցան և վրայ վաշտ զօրք հա-  
մախմուեցան : Արշաւանքը մարտ 2 կի-  
րակի օրը տեղի ունեցաւ : Արաբիկա-  
ցիք երեք կէտէ Սերպիա մտան, այն  
է Բօքօօփի մօտերէն, Վրանիայի դա-  
ւաւին մէջ Լէթօփիէն և Գուրչուշուր  
գաւառին մէջ կիլիմանդէն : 3600  
Արաբիկացիք առանց ամենափոքր  
վարանման յառաջ քաշեցին : Իսկ  
Սերպիա լուր գիրքեր բռնած էին, և  
ժողովուրդն ալ գէնք առած կ'օգնէր  
զօրաց : Սերպի թուոյ մեծ առաւել-  
ութիւն ունենալով, Արաբիկացիք  
ծանր կորուստներ կրեցին : Միւսն  
իշխանն անմիջապէս հրաման ըրաւ որ  
սահմանադրութիւն կեցող զօրաց թիւն  
աւելնայ :  
Սթանտարտ լրագիրն այս դէպ-  
քին նկատմամբ Պէրլինէն մարտ 4  
թուականաւ հեռագիր մը կը հրա-  
տարակէ ծանուցանող թէ Սերպաց  
և Արաբիկացւոյ միջև տեղի ունե-  
ցած կռուայի վրայ, Աւստրիա Նօվի  
Պազարն անմիջապէս գրաւել կ'ըս-  
պառնայ :  
Վիեննայի Տայէ Գայթունի լրա-  
գիրն ալ մարտ 5 թուոյն մէջ կը ծա-  
նուցանէ թէ Բ. Գրան և Սերպիա  
ապագային մէջ պայքարի արկնաւորչա  
դէպքերու առաջին առնու մասին  
համաձայնած են : Իսկ Տայէ Գայ-  
թունի կը ժխտէ այն լուրը թէ Ա-  
ւստրիա Արաբիկացւոյ արշաւանքը  
բանակցութեան նիւթ ըրած է Բ. Գր-  
ան հետ և Նօվի Պազարը գրաւել  
սպառնայ :  
Անդղիոյ մէջ առեւտրական տագ-  
նապը կը շարունակէ, և նոյն իսկ  
Լոնտոնայի քանի մը թաղերուն մէջ  
աղքատաց վիճակը շատ ծանր կեր-  
պարան մ'առած է :  
Յիշեալ քաղաքէն դուրս իսկ  
մակներէ կը տեղեկանամք թէ արժ-  
դոյն և թշուառ մարդոց և կանանց  
խումբեր փողոցներու մէջ կը չրջին  
«գործ չունիմք» պիտալով : Երբեք  
աղքատներն աշխատեցնելու սահման-  
եալ գործատուները լին : Ամեն  
կողմէ հանդեմնակութիւններ կը կազ-  
մուին թշուառաց օգնութեան հաւ-  
նելու համար, և շատ մտնաւոր ան-  
ձինք քաղցրեց ուտելիք կուտան :

բայց օգնութեան կարօտ եղողներուն թիւն այնչափ մեծ է, որ բարեգործութիւնն անկարող կը լինի ամենուն համարը: Այդքանայ թաղերուն մէջ անօթութեան մեռնողներ պակաս չեն: Չմեռն, որ այս տարի ստակմամբ կը մտածուի որ այս տարի շատ աւելի պիտի լինի մեռնողներուն թիւը:

Պաշտօնապէս հաշիւ եղած է որ ամեն տարի լնտարայի մէջ 100-120 մարդ կը մեռնին անօթութեան: Բայց ստակմամբ կը մտածուի որ այս տարի շատ աւելի պիտի լինի մեռնողներուն թիւը:

Հեղինակն կառավարութիւնը խիստ միջոցներ ձեռք առեր է Հեղինակն ապատմեալ խումբներուն Օսմանեան հողն արշաւելն արդիւնէն համար: Յունաստանի մէջ կազմուելու վրայ եղող երեք հրոսակաւ մը, որք սահմանադրական անցնելով Օսմանեան գիւղերու վրայ յարձակիլ կուգէին, Յունաստանի պատերազմական գործոց նախարարին հրամանօք յրուսեցան:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Այս տարւոյ հասած հետքեր:

Փարիզ 17 մարտ. Այսօր Օսմանեան արժեթղթատեարց ժողովոյն դիւանին տնօրէնները Պ. Վառիսիթի մը քանի երթալով, երկուսն մի թիւնի մէջ քուէարկեալ որոշումներն աւեր հարգեցին: Երբ յարկով որ 200 միլիոն ֆրանքի փոխառութեան ստորագրութիւնն ի մօտայ պիտի բացուի արժեթղթատեարց մէջ, որք մաս մը պիտի վճարեն կամ դրամով և կամ Օսմանեան արժեթղթեր:

Պ. Վառիսիթի պատասխանեց թէ տրամադրեալ դրամներն հաւաքուածին պէս, յունիստ 50ի Օսմանեան պայմանագիրն առաջին կարգի Պանքայի մը կողմանէ պիտի երաշխաւորի: Նախարարը յարեց. «Յայնժամ ես Գաղլիսիոյ պատերազմները պիտի անուանեմ և պիտի խնդրեմ Անգլիական կառավարութեան որ իւր պատերազմներն անուանէ:»

Պէրլին 17 մարտ. Վերջէմ կայսեր վիճակը լաւացոյց է, բայց բժիշկը խորհուրդ տուին իրեն որ մարմինը չյուզնեցնէ:

Փարիզ 17 մարտ. Տէպա լրագիրը Ռուսական դիւանագիտութեան գաղտնի մեքենայութիւններէն կը յայտնէ, որ Չարլին անկեղծ ընթացիկ հակառակ է և կուգէ Պէրլինի դաշնադրութեան գործադրութիւնն արդիւն և Այսթիֆանիոյ դաշնադրութիւնն անոր տեղ անցունել: Նոյն լրագիրն յունիստ 28ին լրտ Սալոնիկի կողմանէ խորհրդարար լրտ 1օֆիլիսի դերիւսած ծանուցադրող մը Վիէնայի Բոնիսթոնտան Բոլիթի լրագրոյ մէջ հրատարակուեց ապաքցց մը կը համարի թէ Աւստրիա և Անգլիա բացարձակ համաձայնութիւն մը հաստատած են Պէրլինի դաշնադրութիւնը պաշտպանելու համար և թէ այս երկու տերութեանց բարոյապէս ակախեց է Գերմանիոյ, որ չուզեր թոյլ տալ Ռուսիոյ տարապայման ընդարձակումն ի միտս Աւստրիոյ:

Փիլիպպ 17 մարտ. Մթօլիքին զորավարն և Պ. Պ. Շմիտ և Տը Բուլթուի երէկ առաւօտ Սիւնիո հասան: Բոլոր քաղաքն ու խանութներն տօն կը կատարէր, տուններն ու խանութները դրօշակօք դարձաւորուած էին, մարմնամարդական ընկերութեանց 1500 կամաւորք մէկ կողմ շարուած էին և դպրոցի մանկուանք միւս կողմ Զորավարն եւսակազմին համակրութեամբ ողջունեցաւ: Առաւօտաբար թեան պալատը հասնելուն, քանի մը քաղաքային պաշտօնատարք, ինչպէս նաև խորհրդոց և դատարանին անդամները Մթօլիքին զորավարին ներկայացան, որ Պ. Պ. Տը Բուլթուի և Շմիտի առջև ելաւ միտակցութեամբ կողմնակա կողմնակա յայտնեց անոնց: Քանի մը ժամ յետոյ, կառավար կանայք, որոց ետեւէն մարդիկ ալ կուգային, կառավարչին օրարեցին

մէջ խուժելին պահանջելով որ երկուսից ընդհանուր տնօրէնն (Պ. Շմիտ) իրենց յանձնուի: Տունն ու պարտէզը չըմտաւ, տող ամբողջ բարձր աղաղակներ կ'օրհնէր: քանի մը մարդիկ կըսէին թէ, եթէ Պ. Շմիտ ընդհանուր կառավարչին (Մթօլիքին զորավարին) հետ դանդաղ կառավարչին, քաղաքը մանկու թոյլ չը պիտի տային:

Յայնժամ զօրքերը կոչուեցան. Մթօլիքին զորավարն և իւր սպայք պոռչուողներէն մէկ քանիս իրենց ձեռք ձերբակալեցին: Պոլստարաց աղաղակն զօրք խիստ լաւ կերպիւ վարուեցաւ և հրացանի բռնի հարուածներով ամբողջ զօրքը: Այս նորակազմ զորքն ընթացք անդադար եղաւ. խաղախները քանի մը խըւսովարար ձեռնեցին:

Մթօլիքին զորավարն և Պ. Պ. Տը Բուլթուի և Շմիտի Սիւնիո մտած վայրէ կենին: Ոչ ալ անուն գաղտնի աշակերտներէն տղայ մը Գաղլիսիոյն լեզուով «կեցցե՛ք՝ Գաղլիսիական հանրապետութիւնն աւաղակեց: Այս աղաղակը հուրբաներով ողջունեցաւ:

|            |             |                |
|------------|-------------|----------------|
| Օսմ. Բոն.  | 44 5/8      | Ինտրա 17 մարտ. |
| Փոխ.       | 4863 45     |                |
| »          | 4869 4 1/2  |                |
| »          | 4871 54     |                |
| »          | 4872 21 1/2 |                |
| »          | 4873 43 1/8 |                |
| »          | 69 1/2      |                |
| Անգլ. Բոն. | 96 13/16    |                |

|            |            |                |
|------------|------------|----------------|
| Օսմ. Բոն.  | 11, 87 1/2 | Փարիզ 17 մարտ. |
| Գաղլ. Բոն. | 5 0/0      | 73.60          |
| »          | »          | Նոր 30.65      |
| »          | »          | 5 0/0 115.50   |

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուլթանին կողմանէ ի պատիւ Անգլիական նաւատորմին տըրուած ձաշն երէկ իրիկուն փառաւոր կերպիւ կատարեցաւ: Երբ զօրքն իրենց ձեռք ձերբակալեցին, զորքն իրենց ձեռք ձերբակալեցին: Մը չօրնայի ծովապետն և անոր հրամանայ ներքև գանուող սպայներէն 11 անձինք հրաւիրեալ էին:

Երէկցերէն Մը չօրնայի ծովապետն տը մայրաքաղաքի Մեղիկիական դեսպանին տեղակալ Պ. Մէլիթի հետ Բ. Դուռը դնաց և Մեծ-Եպարքոսին հետ տեսակցեցաւ: Իրիկունն դէմ ալ Մեծ-Եպարքոսը ծովապետին փոխարքած այցելութեան դնաց:

Պ. Տը Բուլթուի և աւուր նոր պայմանագրով ալ ինքրած լինելով, Բ. Դուռն հաւանութիւն տուաւ: Այս պայմանագրով ուրբաթ իրիկուն կը լրանայ:

Մթմագուլ լրագիրը մասնաւոր հեռագրերէ աւելի կը ծանուցանէ թէ թօքլիքի դրամական խախտ Օսմանեան Պանքային խախտին հետ միացեր է: Ուստի, յիշեալ հեռագրաց նայելով, փոխառութեան և պարտուց միացման դօրքը վերջացած պէտք է համարիլ:

Մեհմեթ Բեյ տեղեկութեանց նախելով, Բ. Դուռն կողմանէ ուրբաթ օրը Ղազի Մուլթար փաշային զըրկուած նոր հրահանգները թեւադրուց մէջ սահմանադրուց աւելի ընդարձակ ուղղութիւն մ'ընելու արտօնութիւն կուտան, բայց ոչ խանսան և ոչ ալ Եպարքոսի մէջ ուրիշ նոր տեղեր Յունաստանի թողլու: Հաւանութիւն կուտան: Հետեւաբար կը կարծուի որ Հեղինակը քոչ չպիտի լինին և մեծ տեղութեանց միջնորդութիւնն անհրաժեշտ պիտի լինի:

Նոյի Պաղարի խնդրոյն վրայ բանակցութիւնը մեծ փութով կը շարունակին: Երէկ դարձեալ բանակցութիւն տեղի ունեցաւ Օսմ. և Աւստրիական պատուիրակաց միջև, և որոշուեցաւ վաղն ալ նորէն ի խորհուրդ գումարին: Բայց կայ որ Աւստրալի կոմանէ եկած նոր հրահանգաց

վրայ՝ բանակցութիւնը յաջող եղբ մը կուսնենա:

Մայրաքաղաքի Հրանտիոյ նորքերէն դեսպան Պարօն Ֆան իթէրստի, որ Մատրիտի դեսպան էր, կերակի օրը Կ. Պոլսի հասաւ:

Մթմագուլ լրագիրը կը ծանուցանէ թէ Գոլ աղաղակ տարածան ունեցող խալիլ էֆենտի անուն թուրք ղեկաւորական մը նոր հրացան մը հընարեր է որ Հէնրի Մարթինի հրացանէն աւելի թեթեւ ու դիւրագործածելի է եղեր, և մէկ վայրկեան մէջ 32 դնտակ կ'արձակէ եղեր:

Այս հրացանին մէկ օրինակը Վեհ. Սուլթանին ներկայացուեցաւ, որ շատ գոհ լինելով՝ հրամայեց է որ հնարողին 10,000 դրը պարգև տրուի և ղեկաւորական աստիճանը բարձրանայ:

Միանգամայն հրաման եղաւ որ այս նորահար հրացանէն չինուի կայսերական թնդանօթարանին մէջ:

Կ. Պոլսոյ քաղաքապետութեան կողմանէ այս առաւօտ մեղ զըրկուած պաշտօնական աղբ մը կը ծանուցանէ թէ այսօրու թնդանօթարանի դիւր 10 փարա իջած է, և փոխանակ 6 դրու շուկէսի 6 դրու 10 փարայի պիտի ծախուի: Քաղաքապետութիւնն այս նկատմամբ հետեւեալ բացատրութիւնները կուտայ:

Ամեն հացադործաց 350 դրու շն ոսկի տրուելով, հացին օխան 6 1/2 դրու չի վրայ հաստատ կը մնար: Այս օրերս ալիւրին գինը քիչ մ'իջեալ լինելով, հացադործաց դիւան որները քաղաքապետութեան պաշտօնատուներ դուստրուեցան, և հաշիւ եղաւ որ հացին օխան 6 դրու 1 1/2 փարայի պէտք է ծախուի: Որովհետեւ այս դիւն անհար էր գործադրել՝ մանր դրամի չգոյութեան պատճառաւ, ուստի քաղաքապետութիւնը խնդրեց հացադործներէն որ կառավարութեան կողմանէ եղած զոհարութիւններն ի հաշիւ առնելով, իրենք ալ հաց դուրս պոյք և փարայի զոհարութիւնն ընեն: Հացադործք ասոր հաւանեցան, ուստի միաբանութեամբ վերջելեալ դիւն որոշուեցաւ:

Կերակի օրը Թուրքանէի միլիթին մէջ կառավարութեան կողմանէ դըրամ բաշխուեցաւ: քանի մը հարկը թշուառ դաղթական կանանց:

Մթմագուլ լրագիրը կը ծանուցանէ թէ Թուրքանէի ղեկաւորական ղաւ լաթիկայէն միջև Բանակցութիւն նոր դիւր մը շինելու դիւան որութիւնը գործադրելու կայեալա:

Կերակի Հիւանէ էֆենտի անուն անձ մը կառավարութեան դէմանարդական խօսքեր ըրած լինելով՝ դատուեցաւ և ութ ամիս քարտի դատաւարաւուելով Պրուսա զըրկուեցաւ:

|                               |               |
|-------------------------------|---------------|
| ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ               |               |
| ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ               |               |
| Երէկ իրիկուն դոցուեցաւ        | 43.           |
| Այս առաւօտ բացուեցաւ          | 42.38         |
| Կէս օրին                      | 43. 1         |
| Բուլթուի երկաթուղի            | Ֆր. 46 25     |
| Թղթաղրամ                      | Լր. 487       |
| ԷՆԹԱՅՔ ԱՐԺԱՆԴԹԱՅ              |               |
| Կ. Պոլսի 5 Մարտ               |               |
| Սոխիթ Եւրոպայի բաժ. Անգլ. լր. | 4.22          |
| » փոխանակութեան               | 3.30          |
| Կ. Պոլսոյ Պանքային            | 6.45          |
| Քրէտի Եւրոպայ                 | 5.40          |
| Փոխ.                          | 4863 30. 75   |
| »                             | 4865 78       |
| »                             | 4869 74       |
| »                             | 4872 22       |
| »                             | 4873 69       |
| Թրամուայ                      | Օսմ. լր. 1 75 |

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի.

ՀՐԱՆԵՐ

ԱՌ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՄԻԱՆ

Ազգային ժողովը նիստ ունի յառաջիկայ ուրբաթ մայր 9 ի Ղալաթի:

Ատենը պիտի բացուի ճիշդ ժամը 6 ին և գոցուի 10 ին:

Հրաւիրեալ են երեսփոխան էֆենտիներն իրենց աղապարական պարտականութիւնը կատարելու փութալ:

1879 մարտ 5 ի դիմաց Սրբա. Պարքին Հայոց Կան Պատրիարք Զոր. Գումգափու Նորին Խորհրդական ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿ. ՄԻԹՈՒՐԵԱՆ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնադրութիւն Պատրիարքական փոխանորդի.
2. Առաջարկութիւն Ղաղարոսեան և ֆոփամանեան էֆենտիներու վան ընտրութեան փննիչ յանձնակալին.
3. Հարուստութիւն Պիւտեի վիճարանութեան:

Ատենագալիք Մ. Թ. ՄԵԼԷՆ

Հակահաստանեան Կաթիլի Հայոց երեսփոխանական ժողովը կերակի օրը Ղալաթի Ս. Փրիկի եկեղեցին դուստրուելով՝ Գիւլեթեան էֆենտի դատաւարութեամբ երեւան եղած Պատրիարքական խնդրով դատեցաւ: Նախ՝ Գիւլեթեան էֆենտի հրաժարադրելը կարգացուեցաւ, որ անցեալ տարի մայիս 6ին տուած առաջին հրաժարականին վրայ պնդելով վերջնականապէս կը հրաժարէր, և կը յայտարարէր թէ հրաժարականին մէկ պատճենն ալ Բ. Դուռը զըրկած է: Մայիս 6ի հրաժարականին հետեւեալ և կէտերը կը պարունակէր. 1՝ իւր անձնական վատառողութիւնը. 2՝ թուշիկ անբաւականութիւնը. 3՝ աղբիւր գիւլեթեան դպրոցները հաստատուելի, և 4՝ աղբիւր գործերուն երեսի վրայ միալը, դատաւարութեան և Կ. Պոլսոյ մէջ ալ կաթիլի Հայոց Պատրիարքարանին թուրութեան պատճառաւ: Այս պէս, հրաժարագրերէն և քիչ մին կըրօնական համոզման վերաբերեալ կէտ մը չէր պարունակեր: Ժողովը խորհրդակցելէ յետոյ որոշեց է որ հասարակութեան ընթացիկ գործերը վարչական ժողովոյ կողմանէ կարգաւորի: Իսկ Գիւլեթեան էֆենտի հրաժարման վրայ, քանի մը Հակահաստանեան երեսիցայ կողմէ Բ. Դուռն արեւսագիր մը տրուած էր, խնդրելով որ նոր Պատրիարքի մ'ընտրութեան իրաւունքն աղբիւր կողմանէ ի գործ դրուելու հրաման տըրէի, և մինչև Պատրիարքի մ'ընտրութիւնն էֆենտիներն Գիւլեթի վարդապետ փոխանորդ կարգաւորուէ: ուստի որոշուեց էֆենտի խնդրոյն նկատմամբ վերադառնալ Բ. Դուռը դիմել, և իժեմինչև երեք շաբաթ արդիւնք մը չգոյանայ, նորէն ժողով գումարել: Հաստանեան կաթիլի Հայերն ալ շաբաթ դիւր ժամ 2ին Բաղ. Ժողով կազմեցին Բերայի Լատ. Ս. Երբորդուութեան եկեղեցին: Գումարման իրաւունք տուին էր Կիլիկիոյ կաթիլիկոսութեան և Պատրիարքութեան տիտղոսով աւելեալ: Հաստն Գերապայծառն տրուած կայսերական հրամանադրելը Գիւլեթեան գերապայծառն հըրաժարման առթիւ Բ. Դուռն վաւերացնել տալ: Հաստն գերապայծառն ատենախօսութիւն մ'ընելով վերջին գէտքերուն պատմութիւնն ըրաւ: Գիւլեթեան գերապայծառ. յայտնեց է թէ շատ աշխատեց է որ Հակահաստանեան հասարակութիւնն իրեն հետ Պոլսին հնազանդութեան վերադարձնէ, բայց չէ յաջողեր: Հաստն գերապայծառ խօսքը վերջացնելէ յետոյ

հոգի, և երանիտաններէն Մարգարէան Օն-  
նիկ պէ՛տ առաջարկեր է որ Հասուն  
գերապայծառ լին արուած կայսերա-  
կան հրամանագրին վերահաստատու-  
թեան համար աղերսադիր ապէ՛տ ա-  
ռաջ Հակահասուն եանք անդամ մի-  
րութեան հրաւիրութիւնն, բայց  
այս առաջարկութիւնը չէ ընդուն-  
ւեր: Ի վերջոյ, որոշուեց է թ. Դու-  
ւըն աղերսադիր մ'ուղղել՝ Հասուն  
գերապայծառ լին ըստ առաջնոյն կրի-  
կոյ կաթողիկոսութեան և Պատրիար-  
քութեան տնտեսական վերահաստա-  
տութիւնը խնդրելու համար: Աղեր-  
սադիրը կրկնակի օրը Բ. Դուււըն ղրկը-  
ւեր է:

Տփլիսի Մշակ օրագրին մէջ հը-  
րատարակեալ հետեւեալ նամակէն կը  
տեսնուի գիշարադարձութիւն Ռուսա-  
կան Հայաստանի մէջ դառնալու ազ-  
գայնիք ալ յոռի վարչութեան և տը-  
գիւտութեան չարաշուք ազդեցու-  
թիւնները կրեմէ տգտութիւն, մանա-  
ւանդ իշխանութեան կեդրոններէն  
հետի գոմարտ առանց և գիւղօրէ-  
նց մէջ, և շատ ցտաղի է որ ազգա-  
յին հոգեւորական իշխանութիւնն իր  
մասին ինկած ջանքն ու հոգածու-  
թիւնն ի գործ դնելու բոլորովին  
անփոյթ կ'երևի, զի սուրապէս ե-  
կեղեցականաց գեղծմաներն ու ան-  
կարգութիւնները զայնքալ, ժողո-  
վուրդն իւր ճշմարիտ շահուց վրայ  
լուսաւորելու, և մանաւանդ ազգա-  
յին և հայրենասիրական զգայմանք  
անոնց ներշնչելու մասին:

ՆԱՍՄԱԿ ԲԱԳՈՒԻՅ

16 յունվար

«Հայաբնակ քաղաքներէց և գիւ-  
ղերէց շատ սակաւ տեղեկութիւններ  
են հարցը վրում մեր լրագրներին,  
որովհետեւ ամեն տեղ կամ գործներ  
չը կան և կամ դանաղան պատճառ-  
ներ արգելք են լինում նրանց ազա-  
տօրէն խօսելու և ճշմարիտ գրելու:  
Մեր ժողովուրդը մեծ մասը իր բազ-  
մաթիւ կարիքներով անյայտութեան  
մէջ է մնում: Ուստի աւելորդ չեմ  
համարում այսուհետ հետաքրքրա-  
կան քաղաքներ անել իմ ստացած  
մասնաւոր լուրերէց և նամակներէց:

Թերեքի նահանգի Մ. քաղաքէց  
բարեկամներէց մինը գրում է.  
«Թղթախաղը մեր քաղաքում այն-  
պիսի մեծ յառաջդիմութիւն է ա-  
րել, որ չը կարծեմ թէ որ և իցէ մի  
այլ քաղաք այս կողմնէ կարողանայ  
մրցել մեր հետ: Երբ մի տեղ ենք  
հաւաքուում միշտ խօսում ենք, զա-  
տում և բացատրում այս բնթացքի  
փնտաւար հետեանքը. ամենքն էլ  
տեսն թէ հասկանում են, համոզ-  
վում ու միմեանց խօսք տալիս այլ  
ևս չը խաղալ. բայց տեսնում ենք,  
որ օր ըստ օրէ աւելի խօսն են գը-  
նում: Անցեալները Տէր Գ. ին տանը  
նրա տօն օրի գիշերը 38 խաղ քաղա-  
ն են բաց արել, որ 2 բուրլուց կ'անէ  
72 բուրլ: Յետոյ Տէր Թ. իր տօնի օ-  
րը 10 գիւղին քաղաք առաւ մեր խա-  
տութիւն. երբ ես դարձնեք յայտնե-  
ցի, նա ասաց որ դուցէ բոլորը բա-  
նացի: Միւս օրը, յետ բերեց միայն  
3 գիւղին. ուրեմն նրա տանն էլ մի  
գիշերումը 7 գիւղին քաղաք են բաց  
արել, որ կանէ 84 բուրլ: Այս գեռ-  
քահանաների տներն են. իրենք էլ  
շատ ուրախ են, որովհետեւ շահում  
են, 80 կոպէկով առնում են 2 բուր-  
լով ծախում. և այս է որ նրանց ըս-  
տիպում է երկրորդներ սարքել: Ժո-  
ղովուրդին խնդրում են թող խա-  
ղալ և եթէ մէկը նստէ ու չը խաղայ  
նրանից դժգոհ են մնում, որ քա-  
հանապետ չափ տալ չէ ուզում. այս-  
պէսով շատ անդամ չը խաղացան ևս

խաղում է, որ տեղեկներն  
օգուտ տայ: Իսկ տեղեկներ այս պա-  
կասութիւնը տեսնել և խրատել ամե-  
նեկն չէ ուզում, բաւական է որ ին-  
քը շահվի, նրանք թէկու զէգուց ու-  
տելու հայ չունենան և կամ դնան  
ջուրն ընկնեն: Այս թող խաղա-  
ցողներէց շատերն մեծ էթէ գնաւ և  
բարեգործական նպատակով օգնու-  
թիւն խնդրեալ, հազիւ թէ կարողա-  
նան մէկ մանէթ փող դուրս բերել:  
Բայց մի գիշերում երկու երեք հա-  
րիւրով տարւելը ոչինչ: Մակալս,  
մեր գրութիւնը շատ ցտաղի է. ա-  
մեն կողմից յետ ենք, իսկ թղթա-  
խաղով շատ առաջ, որ մեր ամենա-  
մեծ պարծանքն է: Այս ախար բո-  
լորի վրա է արտաբերած. այն մար-  
դիկն անգամ, որոնք կ'աշխատեն ու-  
րիշներին օրինակ առաջնորդ և դաս-  
տիարակ լինելու, սրա ջերմ երկըր-  
պաղունքից և դերինքից են դար-  
ձել: Գոնէ լրագրները խօսեցին այս  
մասին, դուցէ փոքր ի շատ օգուտ  
կը լինէր»: Թէև մեր քաղաքում ևս  
թղթախաղը յառաջադէմ է բաւա-  
կան, բայց եկեղեցականներ չեն մաս-  
նակցում նրան, ոչ զբաղվում են և  
ոչ ժողովուրդին դարձեցնում նրա-  
նով. դոնէ այս մասին շատ ուրախ  
ենք, որ մեր քահանաները մի քանի  
տեղերի օրինակին չեն հետևում, այլ  
միշտ պակասարկում են թղթախաղը  
և իրանց հօտին յորդորում հեռա-  
նալ նրանից:

Ղարաբաղի և Շամախու թեմե-  
րէց շատ սրտամաշ տեղեկութիւններ  
ենք լսում եկաւորներն բերանից.  
հարկւրաւոր գիւղերի սղորմելի Հայ  
ժողովուրդը անտէր, անխնամ և  
բարձի թողի եղած է. խորին աղի-  
տութիւնը իր սարսափելի հետեանք-  
ներով թաղաւորում է ամեն տեղ և  
ամենքի վրա. գաղթներ չը կան առ-  
հասարակ, սակաւթիւ եղածներն  
էլ մի օրինաւոր բան չեն: Շամախին  
թեմական վերապատու չունի. իսկ  
Ղարաբաղը թէև ունի, բայց նա էլ  
իր աթոռանիւստ Շուշու գործերով  
զբաղված չէ կարողանում գիւղերի  
երես տեսնել: Ժողովուրդը ամեն տեղ  
ծարաւ է ուսման, զգում է լուսա-  
ւորութեան պէտքը և սրան լցուցա-  
նելու համար իր մէջ նիւթական ոյժ  
կը ճարվի, բայց գիտակցութիւն և  
ձեռնարկելու ընդունակութիւն չու-  
նի. առաջնորդներ չկան, որ բացատ-  
րեն, հասկացնեն և համոզեն նրանց  
թէ ի՞նչ կարող է ինքն անել: Մի  
քանի տեղերում պետութեան հո-  
գացողութեամբ դպրոցներ են բաց-  
վում, բայց ինքը Հայը ծաղաղատիկ  
պիտը նստած տեղից չէ շարժվում.  
տեսն թէ պետութիւնը պարտաւոր  
լինի մեղ համար հոգալու, երբ ինք-  
ներս չենք աշխատում մեր գլխի ճա-  
րը տեսնել: Գիւղական իշխանութիւն-  
ներն ու վաչկաւանդներն անխնայ հա-  
րըստահարում են ժողովուրդին և ծը-  
ծում նրան. կաշառակերութիւն,  
անիրաւութիւն և ինքնազլութիւն  
շատ առաջ են գնացել. իւրաքան-  
չիւր անգործութեամբ և ամիկ փողին և իւր-  
միջըները զօրու կարողանում  
է գիւղական դատաւորի կամ տա-  
նուտէրի պաշտօն ձեռք բերել և այ-  
նուհետեւ տանջում խեղճերին:

«Մի քանի գիւղեր միասին կազ-  
մում են մի գիւղական հասարակու-  
թիւն, որ յանձնված է մի տանուտէ-  
րի և երեքաննեայ դատարանի կա-  
ռավարչութեանը, որոնց պարտքերը  
և իրաւունքները որոշված են տեղա-  
կան լեզուներով տպագրած և բա-  
ժանակ օրէնքներով: Իւրաքանչիւր  
դատարանի ժառանգներով մատենա-  
նք են յանձնված տեղութեանից, ուր  
պէտք է արձանագրեն ամեն վճիռ»

ներ և որոշմանքներ. բայց դատա-  
ւորներն հաճաք օրէնք է, ինչպէս  
ձեռք է տալիս այնպէս են դատում.  
և որ զխաւսն է, իւրաքանչիւր դա-  
տարաւ առանձին է դատում և  
անհետք կորցնում արածը. հազուա-  
դիւս գէշքերում միայն խորհրդով  
վճիռ է կայանում և արձանագրում  
մատենակերտում, \* այն էլ Ստաւած  
գիւղէ թէ ինչպէս: Իսկ գրեականները  
բոլորքեւ և արգարութիւն պա-  
հանջելու ոչ ընդունակութիւն ունեն,  
ոչ ժամանակ և ոչ նիւթական ոյժ.  
որքան դրկողութիւններ և կատար-  
եալ քրեական յանցանքներ մնում  
են ծածկված և չը հետազոտված, որ  
իրանց թշուառ զոհերի հետ գերեզ-  
ման են գնում և յաւիտեան մա-  
ռացվում: Ուղիղ է, հասարակու-  
թիւնները իրանք են ընտրում նրանց,  
բայց ոչ գիտակցաւոր և կամաւոր,  
այլ ստիպանքով, անամայ և կուրօ-  
րէն: Ի՞նչ է գիւղական ամբողջ—մի  
թշուառ մեքենայ, որ մի քանի հո-  
գու ձեռքի խաղաղիկ է լինում միշտ  
իսկ այս ամենեկն լաւ նշան չէ. Գիւ-  
ղացու վիճակը շատ ծանր է, նա մար-  
դախարկապաշտ և իշխանք պաշտ-  
պանելու չափ զարգացում չունի.  
նրան հովուող քահանաները՝ նրա-  
նից լաւ չեն և մի քանի վատ կողմե-  
րով գեռ գերազանց էլ են. գիւղա-  
կան իշխանութիւնները, վաչկատուն  
և քահանան միշտ համակոխ, համա-  
բարոյ և համբաւչի են լինում, զոր  
ինքս անձամբ տուրքած եմ երկար  
տարինքով. ամեն յետամնացութեան  
անկարգութեան և դեղման պատ-  
ճառ այս երեքս են. սրանք են, որ  
ամեն յառաջդիմութեան և բարե-  
կարգութեան կայծը հանգցնում են  
և ոչնչացնում. սրանց վարքի ազդե-  
ցութեամբ այս բոպէիս չինականի մա-  
քուր խղճմտանքը թուլացել և հա-  
տատուն բարոյականը սկսել է խախ-  
տելը: — Ղարաբաղի մի քանի գիւ-  
ղերում անցեալ ամառը տիֆ (թիֆո)  
էր ընկել, որովմէ իր իտալական իրանց  
բակերում հաւաքում գարաւոր աղ-  
բակցաները հեռացնելու, մարքելու  
և առողջապահական միջոցների գիւմե-  
րը, սկսել են սուրբերին գիւմել կամ  
անմեղ ոչխարների արկնը թափել  
առատօրէն, որ Ստաւածու ցատուից  
աղաւթին: Առաջ, \* առում են, տա-  
ւարի ցաւ է րոյ ընկել. սկսել են հի-  
ւանդներին մարթել և միան ուտել,  
և ստակածներն էլ բնակարաններին  
մտրիկ դէն են ձգել բաց ողի մէջ  
առանց թաղելու. իսկ նրանից յետոյ  
տիֆը մարդկանց է այցելութիւն ա-  
րել: Այս գիւղերը այնպիսի լաւ  
գիւրք, բարեհամ ջրեր, սքանչելի  
օդ և առատ բուսականութիւն ու-  
նեն, որ կարող են երջանիկ ապրել.  
բայց մարքակցութեան նշանակու-  
թիւնը չհասկանալով, այնքան զոհեր  
են տալիս զուր տեղից. կանայք ա-  
ւելի են հիւանդացել և մեռել քան  
տղամարդիկ, որովհետեւ նրանք միշտ  
անբաժան են իրենց կեղտոտ բընա-  
կարաններից և բակերից. այն ինչ  
սրանք ժամանակի մեծ մասը դաշ-  
տերում են անցկացնում: Մի ժա-  
մանակ հիւանդի եղած աղբիւրները  
այժմ հոտած և փնտաւար ջուր են  
տալիս, որովհետեւ նրանց շուրջը կամ  
շատ մօտիկները աղբանոցներ և հան-  
գըստարաններ են գործած վաղուց-  
նականական փոխութեամբ իւրաքան-  
չիւր տան առաջ պէտք է իր աղբա-  
հարը լինի, ուր անմեղ և հաւաք-  
վում են ամեն աղբ և սպաւանու-  
թիւններ և յաւիտեան մնում այն  
տեղ. և բարեպաշտ Հայ—քրիստոնե-  
եան ամեն ինչ յախախտանութեան  
և ճակատագրի վճիռ համարելով

զորք է ածում իր ձեռքով տալիս  
նաժ ըմպելիքը և օդը և ճանապարհ  
ընկնում անտի կեանք. Գիւղերը բը-  
ժիկ չունեն ամենեկն և չեն էլ սի-  
րում նրանց, որովհետեւ նրանց դի-  
մել և օգնութիւն տալու չեն անտա-  
նելի գիտաբութիւնները և չարա-  
բանքները հետ կապված է. հարկ ե-  
ղած ժամանակ պաւաւներ ուն դաշ-  
տերներն եթէ մի բան չինեցին, շատ  
բարի, թէ չէ ինչպէս ճակատներին  
գրված է՝ այնպէս է լինում անպորոն  
ապրում է, մեռնողը մեռնում և Տիֆի  
պատճառով նահանգական իշխանու-  
թեան տնօրէնութեամբ բժշկները գը-  
նացել են և հրամայել, որ գիւղերը  
մարքեն աղբերից և հիւանդների տը-  
ները ցոյց տան դեղ անելու համար.  
բայց գիւղացիք հնարագիտութիւն  
բանեցնելով հիւանդներին թաքցնել են  
բժիշկներից, և արքանոցները մի մատ  
հօտով ծածկել, որով և նրանք խաբ-  
վել են և կարծել թէ իրանց պատուէր-  
ները արդէն կատարված են: Ասենք  
թէ մի տանից մէկը մեռնում է, նը-  
րանից յետոյ ուրիշներն էլ հիւանդա-  
նում են և կամ մեռնում. գիւղա-  
ցին՝ կարծելով թէ առաջին մեռնու-  
ղին աչքը իր տան վրա է մնացել և  
կամենում է բոլորն եւս իր մօտ առ-  
նուլ, գնում է խեղճին գերեզմանից  
հանում, խանչալով սիրտը ճղում,  
գլուխը կտրում անտէրի տակ թա-  
ղում և կրկին հօտով ծածկում: Պա-  
տահէլ է, որ հանգստարանութեամբ  
ման կարգը կատարելուց յետոյ երբ  
կամեցել են ննջեցեալին գերեզման  
իջնելու, տան մեծերից մինը վնէշ անկ  
թաքցնած խանչալը հանել է և մի  
ակնթարթում նրա սիրտը կտրել բաղ-  
մութեան առաջ: Եւ այդպիսի ան-  
խելք բարբարոսութիւններն ամառ  
են, որ տիֆը հեռանայ իրանցից և  
կենդանի մնացածները վերվնեն: Այս  
ընդհանուր նկարագրից դուրս գու-  
ցէ բացառութիւններ ևս չկան, բայց  
նրանք ամեն տեղ և ամեն բանում  
կը գտնվեն ու միշտ բացառութիւն-  
ներ են, որ հաշուի ձգել չենք կա-  
րող: Իսկ գիւղացու ցաւերը արդա-  
րեւ չա՛տ շատ են. ե՛րբ նա կը բժշ-  
կելի, ե՛րբ նրա աչքերը կը բաց-  
վեն և իր բարին ու չարը կը հասկա-  
նայ. ու մի՞ պարտքն է սրա մասին  
մտածել և խնամք տանել, թո՛ղ չը-  
տապէ և իր պարտքը կատարէ. քանի  
որ ուշ չէ, դեռ ժամանակ և հընա-  
րաւորութիւն կայ: »

ԿԱՍՊԻՍՏԻ

Ա. Զ. Դ.

Եկեմ-գարուի Հայկանոյ վարժա-  
րանը վարժուհի մի պէտք ունենա-  
լով կը հրաւիրուին ամեն անգամ որ  
այս պաշտօնը յանձն առնուլ կուզեն՝  
Մէրճան չարչը Մարգարեան գըրա-  
տունը զմեզ տեսնել:

79 մարտ 3

Նշան Գաբուշ

Ի. Ա. Ն.

Թաղուրար ներտնայ գաղուպ  
Նիզամիէ Նանը Աղիզ խորհրդին  
թէսլիմ գըլլան և զու մանկա պողա-  
յէսինտէն էլից դայըր սալիճ օրարագ  
մէվճուտ օրուպ ֆիրուլթ օրունադ  
էլլի պին դըյէ մըզ տարը պէքսիմթ  
գըրպըր թարիթի գարարնաւա էս-  
մանը երեղիւք գայիմէ երեղ դըրաւա  
օրարագ վիշէլէն վերիւպ պատէհու  
մէվճու օրունադ չուվալարը իլէ պէ-  
րապէր հէման դաւալըրըմալ վէ պու-  
րէքսիմթ իսրիլթ չըզ արըրմադ տան  
մատաւա պաշաւա պիւր շէյ եարըրնա-  
մադ շարթը վէ շէրպիլթի սայրէսիլ-  
լէ պէհէր գըլլէս իլլի բարայա թա-  
լիպի էօհաէսինտէ օրուպ մարթըր քու-

Մենուշահոտ օճառ, մորթը կը կտկուղցնէ ու լեզի ջուրով ալ կը վերկրի, տեսակը խիստ աղնիւ ու գինը շատ ծածան է. կը ծախուի Կ. Պոլիս Դաւթժէա Միմասեանն և ընկերաց Սմերկիա, յի մեղադան: